ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«___» _____ 2024թ. **N_____-Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ԳՈՒՅՔՆ ՈՐՊԵՍ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով քաղաքացիական օրենսգրքի 594-րդ և 597-րդ հոդվածներով, հիմք ընդունելով «Գրիգոր Նարեկացի» բժշկական կենտրոն ՓԲԸ-ի տնօրենի առաջարկությունը՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Որպես նվիրատվություն ընդունել սեփականության իրավունքով «Գրիգոր Նարեկացի» բժշկական կենտրոն ՓԲ /անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական հ.07032024-01-0305 վկայական/ ընկերությանը պատկանող Ազատամարտիկների պողոտայի հ.82/2 հասցեում գտնվող 4794.51քմ մակերեսով հողամասը և 7035.91քմ մակերեսով շինությունը:
2. Առաջարկել Երևանի քաղաքապետին՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել սույն որոշման կատարումը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք - Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր ՈՒ Մ

«ԳՈՒՅՔՆ ՈՐՊԵՍ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ներկայացվող ավագանու որոշման նախագծով նախատեսվում է որպես նվիրատվություն ընդունել սեփականության իրավունքով «Գրիգոր Նարեկացի» բժշկական կենտրոն ՓԲ /անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական հ.07032024-01-0305 վկայական/ ընկերությանը պատկանող Ազատամարտիկների պողոտայի հ.82/2 հասցեում գտնվող 4794.51քմ մակերեսով հողամասը և 7035.91քմ մակերեսով շինությունը:

Երևան քաղաքի ավագանու 2022 թվականի նոյեմբերի 22-ի հ.672-Ա որոշմամբ «Նոր Արեշ» պոլիկլինիկա» ՓԲ ընկերությունը վերակազմակերպվել է միանալով «Գրիգոր Նարեկացի» բժշկական կենտրոն ՓԲ ընկերությանը՝ դադարելով գոյություն ունենալ որպես իրավաբանական անձ և իր գործունեությունը ծավալում է Նոր Արեշի 22-րդ փողոցի հ.63/1 հասցեում: 2023 թվականի նոյեմբերի 1-ից նախկին «Նոր Արեշ» պոլիկլինիկայի շենքը, որը գտնվում է Ազատամատիկների պողոտայի հ.82/2 հասցեում այլև չի գործում և չի շահագործվում, սակայն շենքի պահպանման համար «Գրիգոր Նարեկացի» բժշկական կենտրոն ՓԲ ընկերությանը որպես իրավահաջորդ իրականացնում է ծախսեր:

Ստեղծված իրավիճակում ընկերության կողմից առաջարկվել է այն նվիրել Երևան համայնքին Ազատամատիկների պողոտայի հ.82/2 հասցեում շենքը առավել արդյունավետ նպատակով օգտագործելու համար, իսկ բժշկական կենտրոնը շենքի պահպանման համար ուղղված ծախսերը կներդնի իր կողմից շահագործվող շենքն առավել բարեկարգ դարձնելու համար:

Քաղաքացիական օրենսգրքի 597-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն նվիրառուն իրավունք ունի մինչև նվերն իրեն հանձնելը ցանկացած պահի հրաժարվել դրանից: Այդ դեպքում նվիրատվության պայմանագիրը համարվում է լուծված: Հաշվի առնելով ընկերության գրությունը անհրաժեշտություն է առաջացել Երևան քաղաքի ավագանու որոշմամբ ընդունել «Գրիգոր Նարեկացի» բժշկական կենտրոն ՓԲ ընկերության կողմից Երևան համայնքին նվիրաբերվող անշարժ գույքը:

Ելնելով վերոգրյալից Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում «Գույքն որպես նվիրատվություն ընդունելու մասին» որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ